

Մ. Հ. ՄԻՒԹԱՐՅԱՆ. Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը, Երևան, 1994 թ., «Գիտություն» հրատ... 398 էջ:

Դժվար է դերադնահատել պարբերական մամուլի դերն ու նշանակությունը ժողովրդի պատմության շարադրման, հասարակական մտքի զարգացման ուսումնասիրության գործում: Պարբերական մամուլը եղել և մնում է ժողովրդի պատմության անփոխարինելի սկզբնաղբյուրներից մեկը: Անհնար է պատկերացնել մասնավորապես XIX դ. պատմության ուսումնասիրությունը առանց օգտագործելու մեր հարուստ պարբերական մամուլը: Սակայն մամուլը ոչ միայն պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուր է, այլ նաև հետազոտության օբյեկտ:

Հայ պարբերական մամուլի ուսումնասիրության մեջ պատկանելի ավանդ ունի Մարդո Մխիթարյանը, որի՝ խնդրո առարկա հետազոտությունը լույս տեսավ վերջերս: Լայն է և ընդգրկուն Մ. Մխիթարյանի հետաքրքրությունների շրջանակը: Բաղմաթիվ գիտական հոդվածների և մենագրությունների հեղինակին դրադեցրել են հայ պարբերական մամուլի թե՛ առավել ուշագրավ, թե՛ աննշան թվացող օրգանները: Հայ առաջին պարբերականի, նրա աշխատակիցների, արևելահայ հասարակական մտքի զարգացման գաղափարները, ապա XIX դ. երկրորդ կեսի արևելահայ պարբերականների «Փորձի» և «Արձագանքի»՝ հայ հասարակական կյանքում կատարած դերին և նշանակությանը առնչվող բաղմաթիվ հարցեր Մխիթարյանի գրչի տակ ստացել են իրենց համակողմանի լուսարանում: Սույն մենագրությունը ներկայացնում է նոր մամուլի՝ արևելահայ առաջին պարբերականից մինչև «Հյուսիսսփայլ» անցած դժվարին և փշոտ ճանապարհը: Գիտական հասարակությանը անհայտ կամ գրեթե անծանոթ «Արևելյան ծանուցմունք» (Աստրախան), «Կովկաս» և «Արարատ» (Թիֆլիս) շարաթափերից առաջին անգամ դառնում են առանձին ուսումնասիրության առարկա:

Աշխատությունը բաղկացած է չորս մասից: Առաջին մասի առաջին գլուխը նվիրված է «Արևելյան ծանուցմունքի» ստեղծման և հրատարակության պատմությանը: Աստրախանում հրատարակվող «Восточные известия» լրագրի հետ մեկտեղ այն եղել է երկվեզվյան շարաթափերի մի ճյուղը, լույս է տեսել ընդամենը քսանյոթ համար և դադարել է խմբագրի մահվան պատճառով: Շարաթափերը գրական դեր է կատարել՝ զաղթօջախի հայությունը կապելով մամուլին, նրան տալով ընթերցանության նյութ: Այն Ռուսաստանի տարածքի առաջին հայ պարբերականն էր և մի նոր աստիճանի բարձրացրեց Աստրախանի հայության հասարակական կյանքը: Կարճատև գոյության ընթացքում շարաթափերը չկարողացավ դրսևորել իր ողջ հնարավորությունները, շտարածվեց Անդրկովկասում և ավելի քան մեկ ու կես դար մատնված էր մոռացության:

Աշխատության առավել ուշագրավ գլուխներից է «Հայացք դեպի ակունքները», որը համակողմանի ներկայացնում է Անդրկովկասի և Ռուսաստանի հայ մշակութային կենտրոններում՝ Թիֆլիսում և Մոսկվայում ընթացող հասարակական երևույթները, նոր դպրոցի համար պայքարող գործիչների՝ Ալամդարյանի և Արովյանի, ապա Ներսես Աշտարակեցու և Հովակիմ Լազարյանի ծավալած լուսավորական գործունեությունը, նրանց և Ներսիսյան դպրոցի ու Լազարյան ճեմարանի ուսուցիչների առաջադեմ սաների ջանքերով 1828—1829 թվականներին հրատարակած «Ներսիսյան դպրոցի» և «Մուղայք Արարատյան» ժողովածուները: Հենվելով Ալեքսանդր Երիցյանի ելակետային այն դրույթի վրա, որ այդ երկու ժողովածուների ծնունդը կապված է Կովկասում հայ մամուլի սկզբնավորման զաղափարի հետ, աշխատության հեղինակը հանգամանորեն քննում է այդ ժողովածուները, արժեքավորելով դրանք իրեն XIX դ. 30-ական թվականների գրական հրապարակախոսական մտքի արտահայտություն:

Ներսիսյան դպրոցի աշակերտների գրական ժողովածուն՝ «Ներսիսյանք» կրում է դպրոցի արժանավոր տեսուչ Հարություն Ալամդարյանի ազդեցությունը: Բանասիրական պրպտումների միջոցով Մխիթարյանն ապացուցում է ժողովածուում տեղ գտած անստորագիր բանաստեղծությունների՝ Ալամդարյանին պատկանելու իրողությունը:

Ուսուցիչ Միքայիլ Սալանթյանի ղեկավարությամբ լույս տեսած Լազարյան ճեմարանի սաների գրական ստեղծագործությունների ժողովածուի՝ «Մուղայք Արարատյանի» բանաստեղծությունների զգալի մասը՝ «Քերթվածք մանկանց» վերնագրով, նվիրված է Լազարյան

տոհմի փառաբանությունը, Մոսկվայի հայ գաղթաշախի գերի զնահատմանը, ժողովածուի երկրորդ մասում քննության են առնվում լուսավորչական և կաթոլիկ եկեղեցիների դավանական տարրերում ընդհանրությունները, նշվում է այն միտքը, որ լուրջ եկեղեցիներն էլ պետք է անկախ լինեն, ոչ մեկը չստորադասվի մյուսին: Այս բաժինը, որ կազմված է հարց ու պատասխանի ձևով, բացահայտում է ճեմարանի սաների լուրջ ունակությունը բանավիճային արվեստում: Ողջ ժողովածուն շնչում է հայրենասիրության ուժգին զգացումով և դրանով՝ վարակում է ընթերցողին: Ազգահավաքման կոչերով, ազատասիրական գաղափարների արծարծմամբ, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պատմական ակտի ըստ արժանվույն զնահատմամբ, ժողովածուն մի երևույթ է դառնում արևելահայ մշակութային կյանքում, իրավամբ նշում է Մ. Մխիթարյանը: Հեղինակի աչքից չի վրիպում ժողովածուների բերած նորությունը հայ հասարակական մտքի պատմության մեջ և ըստ այդմ երկու դրժերն էլ արժանանում են բարձր զնահատականի:

Առանձնապես ջերմությամբ է շարադրված «Հայացք դեպի ակունքները» գլխի երրորդ բաժինը՝ «Ապագայի ծրագրերը վերտառությամբ, ուր նոր խոսք է ասվում եւ. Արեւմտյանի, նրա ուսուցիչ Հարություն Ալամզարյանի մասին: Առավել զնահատելի է այն հանգամանքը, որ Մ. Մխիթարյանը գերծ է մեռած նախորդ հետազոտողների միայն բացասական կամ միայն դրական (սև կամ սպիտակ) միակողմանի զնահատականներից: Նա կատարում է բարեխիղճ և օրինկտիվ վերլուծություն, տալիս առավել հավասարակշռված զնահատական:

Աշխատության երկրորդ մասը նվիրված է «Կովկաս» շարաթաթերթի քննությանը: Կովկասը ոչ թե առհասարակ «ԿԱՅԿԱՅ» պաշտոնաթերթի հայերեն տարբերակն էր, այլ ինքնուրույն մի հրատարակություն, որը որոշակի դեր կատարեց Թիֆլիսի հայության կյանքում: Չնայած թերթը ստորագրում էր ռուս խմբագիր Կոստանդինովը, սակայն նա չէր խառնվում ոչ միայն նյութերի ընտրությանը, այլև դրամական հաշիվներին: Այդ գործը մեծ արժանապատվությամբ իրականացնում են նրա հայ գործընկերները՝ Հակոբ Արզանյանը և Հակոբ Կարենյանը, իսկ մեկ տարի անց նրանց է միանում Գարրիկ Պատկանյանը: Այդտեղ առավել են աչքի են ընկնում գիտական նյութի մատուցման մեծ հմտությունը, շարադրանքի կուռ պլանավորումն ու ծրագրավորումը: Հեղինակը երկու տարվա կյանք ունեցած «Կովկասը» ենթարկում է համակողմանի քննության, բացահայտվում են շարաթաթերթի հրատարակման նախապայմանները, ժամանակի հասարակական կյանքի մակընթացություններն ու տեղատվությունները: Ծրագրաթերթը զնահատվում է իրեն ժամանակի տարեգիր, ընդգծվում է նրա դերը անցյալ դարի 40-ական թվականների լուսավորչական շարժման մեջ, քննարկվում են այնտեղ մշակված ծրագրերը, որոնք նպատակամղված էին դպրոցական գործի բարելավմանը: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում շարաթաթերթի հետ Արեւմտյանի ունեցած առնչությունների մեկնարանում: Կովկասի գրական դպրոցի ներկայացուցիչների՝ Գալուստ Շեքմաղանյանի, Մովսես Զահրապյան Արցախցու և մանավանդ Գարրիկ Պատկանյանի բանաստեղծի, ազգագրագետի, քննադատի և բանավիճողի կերպարների բացահայտումը, նրանց գործունեության նկարագիրը աշխատության լավագույն էջերն են և ընթերցվում են շմարող հետաքրքրությամբ: Այդ բաժինը (էջ 167—194) աչքի է ընկնում նոր անունների ու դեմքերի, դեպքերի ու իրադարձությունների, մշակութային կյանքի և ուսական պարբերական մամուլի տարբեր օրգանների հետ ունեցած առնչությունների բացահայտումով: Այդ հենքի վրա է կերտվում Գարրիկ Պատկանյանի քաղաքացու, ազգային արժանապատվության բարձր զգացումով համակված մարդու և գործչի կերպարը, որն ամբողջում է աշխատության հաջորդ՝ երրորդ մասում:

Մենագրության երրորդ մասը նվիրված է Գարրիկ Պատկանյանի «Արարատ» շարաթաթերթի հիմնադրման, ծրագրերի, կառուցվածքի, լեզվի, քննարկվող հարցերի, ինչպես և «Արարատ» տեղ գտած դրական ստեղծագործությունների արժեքավորմանը: Ի տարբերություն «Կովկասի», «Արարատը» հրատարակվում էր դրական աշխարհաբարով՝ «ամենեցուն հասկանալի» դառնալու մեծ ցանկությամբ: Իր ծրագրային հողվածում խմբագիրն արտահայտում էր կյանքից անժամանակ հեռացած հաշատուր: Արեւմտյանի ավանդներին հավատարիմ մնալու գաղափարը, հայ մամուլը և գրականությունը, մանկավարժությունը նրա գծած ուղիով տանելու անհրաժեշտությունը: Մխիթարյանն ըստ արժանվույն զնահատում է Պատկանյանի ավանդը լեզվաշինության քննադատում, ռուսերենին համարժեք նոր բառեր ստեղծելու և օգտագործելու կարողությունը: Առանձնապես արժեքավորվում է շարաթաթերթին քննող մանկավարժական ուղղվածությունը: Քահանա խմբագիրը ընթերցողին հասկանալի, մատչելի ձևով բացատրում է կրոնական տարբեր հասկացություններ, կրոնական տոներ և ծեսեր, մեկնաբանում աստվածաշնչյան ավանդույթներ: Սակայն նմանօրինակ նյութերի անկայությունը չէր բա-

ցառում Գարրիել Պատկանյանի դրական վերաբերմունքը դիտական մտքի և գիտության նորագույն նվաճումների նկատմամբ, Այդ տեսակետից ընդդեմ են մարդակազմությանը, բնական գիտություններին նվիրված հոգվածները, առանձնապես «Աստեղաբաշխական բաժինը», որ տպված հոգվածները ժամանակի բնագիտական մտքի դիրքերից ընթերցողներին որոշակի ծանոթություն էին տալիս տարբեր մեթոդներին մասին:

Երրորդ մասի «Գարրիել Պատկանյան և Ներսես Աշտարակեցի» արժեքավոր գլխում հանգամանորեն լուսարանվում են հայ իրականության այս երկու ականառու դեմքերի առնչությունները, բարդ փոխհարաբերությունները, Ներսես Աշտարակեցի վիթխարի ֆենոմենը բացահայտվում է իր հայացքների և գործունեության բարդ հանգույցներով. Իմերեթիայի թեմի հոգևոր առաջնորդ, աթոռական հոգևորական, Բեսարաբիայի թեմի առաջնորդ, ապա՝ Ամենայն հայոց կաթողիկոս անձնավորության գաղափարական էվոլյուցիայով: Ընդհանրապես աշխատության առավել արժեքավոր էջերն են Ներսես Աշտարակեցի-Ալամգարյան, Աշտարակեցի-Պատկանյան հարաբերությունների պարզարանումը:

Աշխատության չորրորդ մասը վերաբերում է XIX դ. 40—50-ական թվականների լուսավորական շարժմանը, Սա փաստորեն նախահյուսափայլյալ շրջանն է, նրա հրատարակությանը նախորդող տասնամյակների պատմությունը, Չնայած աշխատության առաջաբանում հեղինակը նշում է այն փաստը, որ Նազարյան-Նալբանդյան հարաբերության խնդիրը իրենից առաջ թնալարված առարկա է դարձել բանասերների և պատմաբանների կողմից, սակայն այս բաժինը ես շահեկանորեն աչքի է ընկնում հարցադրումների թարմությամբ ու հին կամ հայտնի փաստերը նորովի մեկնաբանելու մեծ հմտությամբ: Արուսյան, Ալամգարյան, Պատկանյան՝ առաջին սերնդի հայ լուսավորիչներին փոխարինելու են գալիս երկրորդ սերնդի ներկայացուցիչները՝ Ստեփանոս Նազարյանը և Միքայել Նալբանդյանը:

Միևիթարյանը հանգամանորեն թննում է Նազարյանի ծավալած գործունեությունը կաղաչեմով,՝ ապա Անդրկովկասում՝ հայ պարբերական մամուլի օրգան Հիմնադրելու համար, Թուլյա տիպոնը ստանալու համար դրույթները կից դրված հրատարակելիք ամսագրի ծիադիրը բացահայտում է լուսավորիչ գործի հայացքների լայն ընդգրկումը, հայոց պատմությունն ու գրականությունը, աշխարհագրությունն ու ընդհանուր պատմությունը, երկրագործությունն ու բնագիտությունը, վիճակագրությունն ու վաճառականությունը, ահա համառոտ թվարկումը այն թեմաների, որոնց վերաբերյալ երիտասարդ լուսավորիչը պատրաստվում էր գիտա-մասնայական հոգվածներ հրատարակել իր ապագա ամսագրում: Չստանալով այդ հնարավորությունը, նա չի հասահատվում և դիմում է դիտական հետադուրությունների ժանրին. օգտվելով՝ Կազանի համալսարանի ընձեռած հնարավորություններից, 1844 թ. նա ռուսերեն հրատարակում է իր ուսումնասիրությունը՝ «Հայ գրականության պատմության թուղթիկ .ակնարկ՝ սկզբնավորումից մինչև 13-րդ դարի վերջը» թեմայով: Երկու տարի անց նա տպագրում է այդ հետազոտության շարունակությունը՝ «Նորագույն ժամանակների հայ գրականության պատմության տեսություն 14-րդ դարից մինչև մեր օրերը» գիրքը: Կապված լինելով ռուսական իրականության հետ և մեծապես կրելով ռուսական մշակույթի՝ մասնավորապես Բեխտելու հոգի ազդեցությունը, Ստ. Նազարյանը հայ գրականությանը նվիրված իր վերոհիշյալ տեսությունները կազմում է Բեխտելու տարեկան տեսությունների ձևով: Վեր հանելով և զնահատելով նախորդ դարերում, ապա իր ժամանակներում ստեղծված մշակութային արժեքները, Նազարյանը ընթերցողի ուշադրություն է հրավիրում հրատապ լուծում պահանջող խնդիրների վրա: Դրանցից ամենակարևորը՝ գրական կենդանի լեզվի մշակումը և նոր գրականության ստեղծումը Նազարյանը համարում է հայ ժողովրդի լուսավորության առաջին հիմնական գործոնը և նախապայմանը (էջ 304): Իր ուսումնասիրություններում Նազարյանը համակողմանիորեն թնալարվում է հայ նոր գրականության ստեղծման հարցը. գրականություն, որ պատասխաներ նոր ժամանակների պահանջներին և հոգեղեն սնունդ տար երիտասարդ սերնդին: Միևիթարյանը դիտում է Նազարյանի այդ տեսությունները իբրև երկրորդ սերնդի լուսավորչի լուսավորական ծրագրի հավատո հանգանակ, որոնցով դրվում էին հայ լուսավորական շարժման դիտական հիմքերը: Միևիթարյանը արգասավոր է համարում Նազարյանի նախահյուսափայլյալ շրջանի գիտական, հրապարակախոսական գործունեությունը. իր հրատարակած գործերում նա մշակեց գիտական աշխարհագրի հաստատման և հարստացման ազդեցությունը: «Հանդես նոր հայախոսության» ուսումնական երկհատոր ձեռնարկը նրա բոլոր ծրագրերի իրականացումն էր և լեզվաշինարար հեղինակի պրակտիկ գործունեության արտահայտությունը (էջ 316):

1850-ական թվականներին լուսավորական շարժումը ստացավ նոր երանգ ու փայլ Միքայել Նալբանդյանի մասնակցությամբ, գրում է Միևիթարյանը, 1853 թ. ամռանը Նոր-Նախիչևա-

կից մեկնելով Մոսկվա, նա այնտեղ գտավ իրեն գաղափարակից և հոգեհարազատ մի գործընկեր։ Նազարյանին, և աշխարհ սկսվեց նրանց համագործակցությունը։ Լազարյան ճանապարհի այդ երկու դասախոսները գործնականում իրականացրին ռևոլյուցիոն կողմից տեսականորեն հիմնավորված գրական աշխարհաբարի քաղաքացիական իրավունքների վավերացումը (էջ 419)։ «Հազադս հայկական մատենագրության ճառ» նախնականի աշխատությունը շարունակում էր պաշտպանել ռևոլյուցիոն կուսակցության լույս տեսած «Տեսությունների» ավանդույթները։ Պիտակյան մեծ բարեխղճությամբ քննելով Նեմեյանցի «Ճառի» և ռևոլյուցիոն «Տեսությունների» գերաբերյալ արտահայտված անխտիր բոլոր կարծիքները, աշխատության հեղինակը գերթ է մտնում ժխտելու կամ հաստատելու միևնույն այդ հրատարակված գրությունները։ Միևնույն ժամանակ կատարում է մի բախնդիր աշխատանք՝ համեմատելով ռևոլյուցիոն «Տեսությունը» և Նախնականի «Ճառը», իրավամբ հանգում այն եզրակացությանը, որ «Ճառի» ծրագիրը լուսավորական շարժման այդ երկու խոշոր գործիչները մշակել են համատեղ։ Դա նրանց ստեղծագործական պրոցեսի, համատեղ աշխատանքի արդյունքն էր, տվյալ դեպքում կրտսեր բարեկամ իրականացնում էր ավագ գիտնականի գաղափարները։

Առանձնակի հետաքրքրությամբ է ընթերցվում աշխատության շորտորդ մասի երկրորդ գլուխը՝ 19-րդ դարի 60-ական թթ. մեծ բանավեճի նախաշեմին՝ պատկերավոր խորագրով։ Այս բաժնում քննարկվում են ռևոլյուցիոն-Մսեր-Մսերյան, լազարյաններ-Մսերյան, Նախնական-Մսերյան բարդ փոխհարաբերությունները, Մսերյանի կապը Անդրկովկասի պահպանողական մտայնության գործիչների՝ Առաքել Արարատյանի, Սարգիս Զալալյանի և այլոց հետ։ Հանգամանորեն քննելով երկու թևի տեսական և գեղարվեստական ստեղծագործությունները, աշխատության հեղինակն իրավացիորեն գրում է, որ նրանց միջև մղվող գաղափարական պայքարը արտացոլում էր լուսավորական շարժման գործիչների առաջադիմական-վերանորոգչական ձգտումների և կղերաֆեոդալական հոսանքի գործիչների բախումները։

Աշխատության ավարտը «Հյուսիսսևիայի» հիմնադրման պատմությունն է։ Այն արձանագրվում է իրեն հայ հասարակական կյանքի վերելքի նոր փուլի սկիզբ։

«Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը» ընթերցվում է լիարժեք հետաքրքրությամբ։ Հարկ ենք համարում առանձնապես շեշտել հեղինակի գիտական բարեխղճությունը։ Չկա որևէ հարցադրում, որ անտեսի հեղինակը։ Ըստ արժանվույն գնահատելով բոլոր ուսումնասիրողների աշխատանքները, հեղինակը միայն դրանից հետո է նշում իր բերած նորը։ Աշխատության արժանիքներից թերևս ամենամեծը նրա հանրագիտարանային բնույթն է։ XIX դ. երկրորդից մինչև վեցերորդ տասնամյակի արևելահայ բազմաթիվ հայտնի և անհայտ հասարակական գործիչների, հերոսների մի շքեղ պատկերասրահ է հաղորդում ընթերցողի աչքի առջև, ընդլայնվում է նրա մտահորիզոնը բազմաթիվ նոր իրադարձությունների, հասարակական կյանքի ալեբախումների քննությամբ։

Իրեն դիտողություն թերևս կարելի է նշել, որ «Երախայրիք ներսիսյան դպրոցի» և «Արարատ» շարաքննարկների գրական ստեղծագործությունները քննվում են խիստ հանգամանորեն, ընդարձակ և մանրամասն, ձգձգված են մեջբերումները։ Մեզ թվում է, կարելի էր սեղմել այդ բաժինները։ Իհարկե՞ հասկանալի է մանրամասն և երկարաշունչ գրելու հեղինակի միտումը։ Վերահիշելով ժողովածուներն ու մամուլի այդ օրգանները վաղուց դարձել են մատենագիտական հազվագյուտ արժեքներ և անմատչելի են ընթերցող լայն հասարակությանը։ Այդ գրքով հնարավորություն է ընձեռվում ըստ ամենայնի գաղափար կազմել դրանց մասին և այդ ձևով հաղորդակցվել դրանց։

Առանձնահատուկ ուշադրության են արժանի հեղինակի ժանոթագրությունները, որոնք ոչ միայն որևէ դեպքի կամ փաստի պարզաբանումն են, այլև ճշգրտումներ են մտցնում տարբեր փաստերի մինչև այդ եղած մեկնաբանություններում։ Հեղինակի գիտական բարեխղճության և բարոյական բարձր չափանիշների արտահայտություններն են դրանք, մանավանդ, երբ ուղղումներ է մտցնում նույնիսկ տարիներ առաջ իր կողմից հրատարակած փաստերի մեջ։

Աշխատությունը գրված է գերազանց հայերենով, շարադրված է հստակ և կուռ տրամաբանությամբ։ Մ. Մխիթարյանի գիտական ձեռագիրը հնարավոր չէ շփոթել ուրիշների հետ։

Այսպիսով, ընթերցողի սեղանին է դրված ուշագրավ մի աշխատություն, որ խոշոր նվաճում է արևելահայ մամուլի պատմության ուսումնասիրության մեջ։

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու